

— Եկեղեցեաց նաաւադարէի բռնը ուի՛ն որ հանդիսաւորութեամբ կը կատարուի այս մատարան ղեջ։

Մեր Ճաշոցին վերոգրեալ տողերէն, ինչպէս նաև Դ. գարու էթէրիա կոյսի ուղեգրական այս մանրամասն ծանօթութիւններէն որոշ կը հասկցուի թէ Գողգոթայէն տարբեր և զատ հիմնարկութիւն մըն էր այս Վե՛թ Եկեղեցին կամ մատարանը, ուր տեղի կ'ունենային տարւոյն որոշ օրերուն մէջ վերոյիշեալ պաշտամունքներն ու արարողութիւններ։

Մեր Զեռագիր Ճաշոցներուն մէջ յիշատակուած մատարան բառը Ուխտաւորութիւն յատկապէս կ'անուանէ Վե՛թ Եկեղեցի։ Տեղագրական այս նիւթերով հետաքրքրուողները շատ անգամ չեն կրնար ըմբռնել թէ ո՛ւր կը գտնուի այս մատարան ըսուածը և ի՛նչ յիշատակներու յատկացուած է։ Պիտի ջանանք մեր այս տողերով բացատրել այս պարագան և յետոյ նկարագրել նոյն եկեղեցիին պատմականը։ Մեր բացատրութիւնները տալէ յառաջ կարևոր կը համարինք տեղագրական ճշգում մը ընել։

Մեր Ճաշոցի վերի տողերուն մէջ ժողովին ի սուրբ մատարան ի Կալաֆէ բառերը, թէև քիչ մը տարտամօրէն պարզուած, կը նշանակեն թէ տարւոյն որոշ օրերուն մէջ հաւատացեալք կը հաւաքուին Երուսաղէմացի ժողովրդեան յատուկ Վե՛թ Եկեղեցին, այսինքն մատարան մէջ. այդ եկեղեցին էր քաղաքացւոց մատուռը, ուր կիրակի օրերը մասնաւոր պաշտամունք կը կատարուէր, քարոզ կը խօսուէր և Ս. Պատարագ կը մատուցուէր. ի մի բան, կը կատարուէին այն ամէն արարողութիւնները, զորս Ս. Կիւրեղ Երուսաղէմացին իր ԻԱ. երախայսկան դասերուն մէջ կը պարզէ։ Աւագ չաբաթի գիշերային բոլոր հսկումները հո՛ն կը կատարուէին։ Այս իրողութիւնները ըստ բաւականի ցոյց կու տան թէ մատարան ըսուածը սաղիմական ժողովրդապետութեան կրօնական կեանքի կեդրոնն էր։ Ահա այս է պատճառը որ Զեռագիր Ճաշոցը կ'ըսէ ի սուրբ մատարան ի Կալաֆէ։

Այս մեծ եկեղեցին կամ մատուռը Գողգոթային ճիշդ Եփեփէն (post crucem) կը գտնուէր. և էթէրիայի համաձայն, մեծ կը կոչուէր այն պատճառաւ որ մերձակայ շէնքերէն աւելի մեծ էր։ Բուն Գողգոթան ժայռի կտոր մըն էր, որուն վրայ Յիսուս խաչուեցաւ. այդ ժայռին վրայ հաստատուած էր պատուական քա-